



**Կարգապահական գործ թիվ ԿԳ-19005**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2019 թվականի հունիսի 18-ի թիվ 162-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/104-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ԳԱՅԱՆԵ ԳԱԼՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Գայանե Դեմիրջյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Հարություն Հարությունյանի կազմով, քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի, քննության առնելով փաստաբան Գայանե Գալոյանին (արտոնագիր թիվ 272) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց՝**

**1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

Անահիտ Փափազյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**) 25.01.2019թ. դիմելով Պալատ հայտնել է, որ փաստաբան Գայանե Գալոյանը (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) իրեն համոզել և հավաստիացրել է, որ իր մոր և քեռու խնդիրը բավականին հարթ ընթացակարգով լուծելի է դատական կարգով, ինչի համար Դիմողը կատարել է վճարում 250.000 ՀՀ դրամի չափով: Սակայն փաստաբան Գայանե Գալոյանը հրաժարվել է տալ իր կողմից գումարի վճարումը հաստատող որևէ փաստաթուղթ, ստացական կամ համապատասխան պայմանագիր:

Դիմողը հայտնել է նաև, որ փաստաբան Գայանե Գալոյանը, ստանձնելով հիշյալ խնդրի կարգավորումը, իր մորից և քեռուց վերցրել է համապատասխան լիազորագրեր: Այնուհետև խնդրի կարգավորման համար փաստաբանն ընթացքում իրենից պահանջել է նաև այլ լրացուցիչ գումարներ (*օրինակ՝ փաստաբանական հարցում կատարելու համար իր արտոնագիրը պատճենահանելու և համապատասխան գրությանը կցելու համար իրենից պահանջել է 10.000 դրամ և հորդորել, որ ինքն այդ գումարը բանկում փոխանցի ոչ թե անձամբ իր, այլ բոլորովին անձանոթ անձի՝ ա/ձ Հասմիկ Գալոյանի հաշվին*), որը ստիպված վճարել է:

Դիմողը նշել է նաև, որ փաստաբան Գայանե Գալոյանն իր մոր ու քեռու անունից հայցադիմում է ներկայացրել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին, որի արդյունքում այն վարույթ է ընդունվել նույն դատարանի դատավոր Ս. Հովսեփյանի կողմից (քաղաքացիական

գործ թիվ ԵԱՔԴ/4247/02/17): Հայցադիմումը դատարան ներկայացնելով՝ Գ. Գալոյանը դրա և այդ դատական գործի հետ առնչվող որևէ նյութի կամ դրանց պատճենները չի տվել իրենց:

Դիմողը հայտնել է նաև, որ ըստ իր ունեցած հստակ տեղեկությունների, փաստաբան Գայանե Գալոյանի նկատմամբ ՀՀ իրավապահ մարմինների կողմից քրեական գործ է հարուցվել, որը վերաբերել է կաշառքի հետ կապված քրեորեն պատժելի արարքի և, որ այդ իրադարձությունը բավականին հիմնավոր տարակուսանք ու կասկածներ է առաջ բերել Գայանե Գալոյանին հանձնարարած իրենց գործի հաջող ընթացքի վերաբերյալ: Կաշառքի կապակցությամբ Գայանե Գալոյանի նկատմամբ քրեական գործի հարուցումից հետո, իրեն հանդիպել են նրա գործընկեր այլ փաստաբաններ և խնդրել ու համոզել, որ իրենց դատական գործը վարի այլ փաստաբան կամ որ իրենք ստիված կլինեն սպասել Գայանե Գալոյանի վերադարձին, այնուհետև համոզելով՝ իր մորից և քեռուց լրացուցիչ լիազորագրեր են վերցվել: Հետագայում դատական գործի վարումը ստանձնել է Գայանե Գալոյանի մեկ այլ գործընկերը՝ Նսիրա Հովհաննիսյանը:

Դիմողը նշել է, որ դատարանի վարույթում գտնվող հայցադիմումի պատճենը ստանալուց հետո այն ցույց է տվել տվյալ ոլորտի հետ սերտորեն առնչվող տարբեր անձանց և ստացել է միանշանակ կարծիք, որ հայցադիմումը բացարձակապես անհիմն է, քանի որ այն ամրապնդող ու համապատասխան որևէ ապացույցի բացակայության և թե հայցադիմումի հակասական հիմնավորումների առկայությամբ: Գոյություն չունեն գույքի փաստացի տիրապետման վերաբերյալ օրենսդրի կողմից պահանջվող երեք պայմաններից գոնե մեկի վերաբերյալ ապացույցներ: Ստիպված, իր մայրն ու քեռին հրաժարվել են տվյալ հայցապահանջից:

## **2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 25.02.2019թ. թիվ 52-Ա/ԿԳ-19005 որոշմամբ փաստաբան Գայանե Գալոյանի (արտոնագիր թիվ 272) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագրքի**) 3.1.3 ենթակետի խախտման հատկանիշներով:

02.03.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հայկ Պետրոսյանին:

## **3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցումները.**

### **3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.**

09.04.2019 և 13.05.2019 թվականին Դիմողը ներկայացրել է բացատրություններ, որով ըստ էության հայտնել է, որ Գայանե Գալոյանը հայտնել է դիրքորոշում, թե դիմումատուն իրեն վճարել է իր կատարած աշխատանքի համար, և ստացվում է, որ փաստաբանն ավարտել է իր աշխատանքը՝ այն է Փաստաբանական ծառայությունների մատուցումը, սակայն փաստաբանը գումարը պահանջել էր նախորոք գործին ընթացք տալու համար, որը վերաբերում էր դատարանով ժառանգության իրավունքի հարցի հանգուցալուծմանը: Նրա ծառայությունների մեջ

մտնում էր խնդիրը դատարանին ներկայացնելը, դատարանում իր իրավունքներն ու շահերը պաշտպանելը, արդարացի որոշումների կայացման համար պայքարելը, նաև գործին առնչվող իրավական փաստաթղթերի կազմումը, սակայն փաստաբանը երբ պետք է հասցնել այսքանն անել, որ համարել թե 250.000 դրամը ստացել է իր կատարած աշխատանքի համար:

Դիմողը, անդրադառնալով Պատասխանողի այն դիրքորոշմանը, որ ինքը Պատասխանողին դիմել է խնդրանքով ոչ մեկ անգամ, այլ բազմաթիվ անգամներ նույն խնդրի շուրջ, նշել է, որ նրա մոտ գնալու պատճառները շատ էին, իսկ մինչ փաստաբան Գայանե Գալոյանի մոտ գնալը ինքը նույն հարցով դիմել է ուրիշ փաստաբանների, որոնք ներկայացրել են ժառանգության իրավունքի գործում անհրաժեշտ օրենքի պահանջների և ապացույցների առկայությունը, իսկ դատարանով հարցի դրական լուծման մեջ կարևորել վստահորդի շահերն այն նայելով տոկոսային հարաբերակցության տեսանկյունից և փաստաբաններից ոչ մեկը հանձն չի առել այդ գործի համար գումար վերցնել՝ համարելով անշահավետ հենց Դիմողի համար: Սակայն փաստաբան Գայանե Գալոյանը քմծիծաղել է այն փաստաբանների վրա, ով վախեցել էր գործը վերցնելուց և խոստացել, ամեն ինչ անել, որ բնակարանի հասանելի մասը Դիմողի մորը լինի, իսկ վաղեմության ժամկետի հարցը լուծելի է:

Դիմողը նշել է նաև, որ փաստաբան Գայանե Գալոյանի մոտ գնալու պատճառներից էր տվյալ գումարի վերաբերյալ պայմանավորվածության ձգձգելը (հարմար չէր լինում խոսելու), իսկ գումարի ստանալուց հետո նրա անտարբեր լռությունը գործը սկսելու հարցում: Դիմողը ստիպված է հիշեցնել փաստաբանին իրենց միջև պայմանավորվածության մասին բոլոր այն հարցերի շուրջ նախքան նրան փաստաբան ընտրելը և գումար տալը և վերջ ի վերջո պարզվեց, որ այդ հարցում ոչ մի ուրիշ մոտեցում էլ չկա ու միակ պայմանը մնում է օրենքի պահանջներն ու ապացույցները, իսկ փաստաբանը նշել է, որ խոստացել է ուրեմն կանի և ուղղակի պետք կլինի շնորհակալ լինել դատավորին:

Դիմողը հայտնել է նաև, որ փաստաբանի կողմից գրված հայցադիմումը չի ընդունվել վարույթ, փորձել է մտնել նոտարի մոտ գրված ժառանգություն ընդունելու իրավունքի դիմումով, սակայն դատից մի քանի օր առաջ փաստաբանին ձերբակալել են, իսկ գործը հանձնել են իր թիմի մեկ այլ փաստաբանի՝ Նաիրա Հովհաննիսյանին և իրենց առաջ պայման է դրվել կամ սպասել մինչև Գայանե Գալոյանին բաց կթողնեն կամ ընդունել Նաիրա Հովհաննիսյանին:

Խորհրդի նիստին ներկայացել են Դիմողը և իր ներկայացուցիչ Աշոտ Սաֆարյանը և ըստ էության հաստատել Դիմումում նշված հանգամանքները:

### **3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.**

08.02.2019 թվականին փաստաբան Գայանե Գալոյանը ներկայացրել է բացատրություն, որով հայտնել է, որ Անահիտ Փափազյանն իրեն դիմել է 2017 թվականի մայիսի կեսերին, ներկայացրել է իրենց խնդիրը, որ ք. Երևանի Մ. Ավետիսյան 4-րդ փող. 22 շենքի թիվ 34 բնակարանը պատկանել է իր տատիկին և դիմելու պահին վիճելի գույքը տնօրինում և տիրապետում է միայն մորաքույրը, մայրն ու մորեղբայրը զրկվել են իրենց ժառանգական գանգվածից: Նա նշված խնդրով իրեն դիմել է ոչ մեկ անգամ այլ բազմաթիվ անգամներ, անգամ տղայի հետ և, որ ինքն ամեն անգամ նրան բացատրել է, որ իր ցանկության կատարումը համարյա անհնար է, և նշել է այն պայմաններն ու ապացույցները, որոնք անհրաժեշտ են: Անահիտ Փափազյանը ներկայացրել է հարևանների հայտարարությունները, որ նրա մայրը և մորեղբայրը

իրենց մոր մահից հետո բնակվել են, տնօրինել և տիրապետել են վիճելի գույքը և անգամ հարևանների հայտարարությունները ներկայացնելուց հետո ինքը նրան հայտնել է, որ գործի դրական լուծումը քիչ հավանական է և կամքը իրենցն է սկսի հայցադիմումի կազմումը, թե՛ ոչ: Մի քանի օր հետո եկել է Անահիտ Փափազյանը և հայտնել է, որ սկսի, իսկ ինքը նրան հայտնել է, որ եթե չշահեն դատական գործն ինքը իրենց գումարը չի վերադարձնելու, քանի որ ինքն աշխատանք է կատարելու և այդ գումարն իր կատարած աշխատանքի վարձն է:

Փաստաբան Գայանե Գալոյանը հայտնել է, որ դիմումատուն իրեն վճարել է իր կատարած աշխատանքի համար:

Պատասխանողը թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

### **3.3. Վկաների ցուցմունքները.**

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

### **4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.**

26.04.2019թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Հայկ Պետրոսյանը կազմել է եզրակացություն: Նախապատրաստողը եզրակացրել է, որ փաստաբան Գայանե Գալոյանի արարքում առկա է 3.1.3 ենթակետի խախտման հատկանիշը, քանի որ գործում բացակայում է, որևէ գրավոր ապացույց՝ պայմանագիր, որը կհավաստի փաստաբան Գայանե Գալոյանի կողմից վճարովի հիմունքներով իրավական օգնություն ցույց տալու փաստը:

03.05.2019թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2019 թվականի հունիսի 18-ին, ժամը՝ 19:00-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

### **5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. 2017 թվականի հունիսի սկզբին Դիմող Անահիտ Փափազյանն իր մորը և քեռուն իրավական օգնություն ցույց տալու համար դիմել է փաստաբան Գայանե Գալոյանին:

2. Դիմողը փաստաբան Գայանե Գալոյանին վճարել է 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

*Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ Դիմողի կողմից ներկայացված դիմումով, Պատասխանողի բացատրությամբ:*

3. Դիմող Անահիտ Փափազյանի և Պատասխանող փաստաբան Գայանե Գալոյանի միջև փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր չի կնքվել:

*Նշված փաստը հաստատվում է գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ Դիմողի կողմից ներկայացված դիմումով, Դիմողի բացատրությամբ, պայմանագրի գոյության ապացույցի բացակայությամբ պայմանավորված Դիմողի ժխտողական պնդումով:*

4. Անահիտ Փափազյանը 2019թ. հունվարի 25-ին դիմում է ներկայացրել Պալատին՝ փաստաբան Գայանե Գալոյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու խնդրանքով:

*Նշված փաստը հաստատվում է գործում առկա Դիմողի կողմից ներկայացված դիմումով:*

#### **6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Գայանե Գալոյանի (արտոնագիր 272, ստացված՝ 05.09.1996թ.) նկատմամբ 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 25.02.2019թ. թիվ 52-Ա/ԿԳ-19005):

#### **7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

***Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գայանե Գալոյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման, հետևյալ պարճառաբանությամբ.***

***Կանոնագրի 3.1.3 ենթակետի համաձայն՝ Գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի սրանձնելու պահից երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքներ կամ ծառայության ծավալը ճշտվելու անհրաժեշտություն կա:***

Կանոնագրի 3.1.3 կետի շարադրանքից հետո է, որ գրավոր պայմանագիր կնքվելու պարտականությունը դրվում է Պատասխանողի վրա: Խորհուրդն արձանագրում է, որ Պատասխանողը չի ներկայացրել ապացույց, որը կհաստատեր Դիմողի հետ փաստաբանական ծառայությունների գրավոր պայմանագրի կնքման փաստը: Վերոնշյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը հաստատված է համարում այն փաստը, որ Դիմողի և Պատասխանողի միջև փաստաբանական ծառայությունների մատուցման գրավոր պայմանագիր չի կնքվել: Միաժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ ինչպես Դիմողի, այնպես էլ՝ Պատասխանողի բացատրություններով հիմնավորվում է այն հանգամանքը, որ Դիմողն իրավաբանական օգնություն ստանալու համար դիմել է դեռևս 2017 թվականին, այսինքն՝ ավելի քան 1 տարի առաջ, և Պատասխանողի կողմից պայմանագիր կնքվելու պարտականությունը ծագել է հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից, որը պետք է կատարվեր երկու ամսվա ընթացքում:

**«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 39.3 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական**

վարույթը կարող է հարուցվել կարգապահական պարասխանատվության հիմքը հայրնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո: Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ խախտմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման: Կարգապահական վարույթ հարուցվելու օրվանից սույն մասով նախատեսված վաղեմության ժամկետը կասեցվում է:

**Նշված իրավական նորմով նախատեսված է փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և պարասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը: Դա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում փաստաբանի վստահորդը կամ այլ իրավասու անձ կարող է Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման հիմքով ներկայացնել հաղորդում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:**

**Նշված ժամկետն անցնելը (այդ ժամկետի ընթացքում կարգապահական վարույթ հարուցելու հաղորդում (դիմում) չներկայացնելը) շահագրգիռ անձի համար առաջ է բերում անբարենպաստ իրավական հետևանքներ, այն առումով, որ նույնիսկ կարգապահական պարասխանատվության հիմքի առկայության (փաստաբանին վերագրվող արարքը հաստատվելու) պարագայում Օրենքի իմպերատիվ պահանջից ելնելով փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվել չի կարող, իսկ այն հարուցման դեպքում ենթակա է կարճման:**

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ «Փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում՝ երբ անցել են սույն օրենքով նախատեսված վաղեմության ժամկետները:

Խորհուրդն արձանագրում է, որ թեև Պատասխանողի կողմից չի կնքվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագիր, որպիսի վարքագիծը հակասում է Կանոնագրքի 3.1.3 ենթակետի պահանջներին, սակայն նկատի ունենալով, որ Դիմողը բաց է թողել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար սահմանված վաղեմության ժամկետը սույն կարգապահական վարույթը ենթակա կարճման: Խորհուրդն արձանագրում է նաև, որ սույն դեպքում Դիմողը չի հանդիսացել վստահորդ, մինչդեռ Կարգի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝... *Վարքագծի կանոնագրքի 3-րդ գլխով նախատեսված կանոնի խախտման հիմքով կարգապահական վարույթ կարող է հարուցվել միայն վստահորդի (այդ թվում՝ նախկին) հաղորդման հիման վրա, բացառությամբ նույն գլխի 3.1.6, 3.1.7, 3.1.8, 3.1.9, 3.1.10, 3.2.1, 3.2.5, 3.5.1, 3.5.3, 3.5.4 ենթակետերից որևէ մեկում նշված կանոնի խախտման դեպքի:*

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, 39.8. հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Պալատի կանոնադրությամբ, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, ՀՀ «Փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի Պալատի խորհուրդը՝

**Ո Ր Ո Շ Ե Ց՝**

**1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 25.02.2019թ. թիվ ԿԳ-52-Ա/ԿԳ-19005 որոշմամբ փաստաբան Գայանե Գալոյանի (արտոնագիր՝ 272) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:**

**2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:**

**Ծանոթություն.** Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի  
կարգապահական գործով  
նիստը նախագահող՝

Գայանե Դեմիրջյան

**18 հունիսի 2019թ.  
թիվ ԿԳ/104-Ա  
ք. Երևան**